

ՀԱՅԿԱԿԱՆ ՆԱԽԱԳԻԾ

# 44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ՝ 444-ՕՐՅԱ ԳԵՐՈՒԹՅՈՒՆ

## Հայ ռազմագերիները Ադրբեջանում

«ՀԱՅԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ՇԱՐՔ

#2, ՍԵՊՏԵՄԲԵՐ / 2022

ՀԱՅԿԱԿԱՆ ՆԱԽԱԳԻԾ

**«Հայկական ուսումնասիրություններ» շարք**

**#2**

**Սյուզան Նաջարյան**

# 44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ՝ 444-ՕՐՅԱ ԳԵՐՈՒԹՅՈՒՆ

Հայ ռազմագերիները Ադրբեջանում

**armenianproject.com**

**hayaliq.com**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՍԵՂՄԱԳԻՐ 4

ԳԼՈՒԽ 1 5

Անհետ կորած, թե՞ գերեվարված. 5

ինչ վիճակում են այսօր հայ գերիներն Ադրբեջանում 5

ԳԼՈՒԽ 2 15

Գերիների հարցի շահարկումը ներքաղաքական կյանքում 15

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 24

# ՍԵՂՄԱԳԻՐ

- Ադրբեջանական և դե-ֆակտո հայկական իշխանությունների հայտարարությունների համաձայն, Ադրբեջանում այժմ պահվում է 38 հայ գերի: Սակայն ՄԻԵԴ-ում գերիների հարցով ՀՀ ներկայացուցիչ Սիրանուշ Սահակյանի և իր թիմի ջանքերով հայտնաբերվել են ապացույցներ ևս 80 անձանց գերեվարման փաստով:
- Մինչ օրս վերադարձած գերիների թիվը կազմում է 151 հոգի:
- 38-ից 37-ի նկատմամբ հարուցված է քրեական գործ:
- Հաստատված 38-ից 3-ը քաղաքացիական անձինք են:
- Գերիների նկատմամբ կտտանքները մասսայական բնույթ են կրում և հիմնված են հայատյացության քաղաքականության վրա: Խոշտանգումների ենթարկվել են անխտիր բոլոր գերիները՝ անկախ տարիքից և սեռից:
- Առանձնակի դաժանություն է դրսևորվել բարձրաստիճան զինվորականների և տարիքով մեծ գերիների նկատմամբ: Վերջիններս, ըստ ադրբեջանական կողմի ենթադրությունների, պետք է մասնակցած լինեին նախորդ 2 պատերազմներին:
- ՀՀ դե-ֆակտո իշխանությունները գերիների հարցը դարձրել են քաղաքական առևտրի թեմա՝ փոխանակելով նրանց մե՛կ քարտեզների, մե՛կ ադրբեջանցի դիվերսանտների դիմաց:
- Դե-ֆակտո իշխանությունների համար գերիների հարցը ոչ այլ ինչ է քան ներքաղաքական կյանքում շահարկումների և անձնական փառքին ծառայող գործիք:
- Գերիների հարցի լուծման համար կարևոր է քաղաքական որոշման առկայությունը, իսկ այդ պարագայում հարկավոր է դե-ֆակտո վարչապետի անմիջական ներգրավվածությունը:
- Քաղաքական գործիքակազմի անգործունակության պարագայում անհրաժեշտ է դիմել իրավական գործիքակազմին, որով այժմ զբաղվում են հայ իրավապաշտպանները:

## ԳԼՈՒԽ 1

## Անհետ կորած, թե՞ գերեվարված.
## ինչ վիճակում են այսօր հայ գերիներն Ադրբեջանում

Նոյեմբերի 9-ի եռակողմ գրավոր կապիտուլյացիոն փաստաթղթի 8-րդ կետի համաձայն՝ կողմերը (Հայաստանի Հանրապետություն և Ադրբեջանի Հանրապետություն) պարտավորվում են կատարել ռազմագերիների, պատանդների և այլ պահվող անձանց, ինչպես նաև զոհվածների մարմինների փոխանակում[1]:

Եռակողմ հայտարարության ընդունումից անցել է ավելի քան 1.5 տարի, և փաստացի հայկական կողմը դեռևս ունի գերեվարված անձինք, որոնք պահվում են Բաքվի բանտերում և որոնց թիվը, համաձայն հայկական կողմի իրավապաշտպանների կատարած փաստահավաք առաքելության տվյալների, գերազանցում է 100-ը:

Ադրբեջանական կողմի պնդմամբ այսօր Բաքվում պահվող հայ գերիները 38-ն են:

**Սակայն, ինչպես վերը նշվեց, հայկական կողմի իրավապաշտպանների՝ մասնավորապես ՄԻԵԴ-ում գերիների հարցով ՀՀ ներկայացուցիչ Սիրանուշ Սահակյանի կատարած փաստահավաք առաքելության արդյունքում հավաքված ապացույցների հիման վրա կարելի է պնդել, որ բացի վերոնշյալ 38-ը՝ կան ևս 80 գերիներ, որոնց գերեվարման փաստը, սակայն, Ադրբեջանը չի ընդունում:** Այս մասին իրավապաշտպանը խոսել է թե՛ «Սպուտնիկ Արմենիա»-յին[2], թե՛ «Հայկական ալիք»-ին տված հարցազրույցում: Ընդ որում՝ կարևոր է նշել, որ 38-ի գերեվարման փաստի հաստատումից հետո հայրենադարձման դեպք չի եղել, այսինքն՝ այս պահին ևս այդ թիվը մնում է անփոփոխ: Մնացյալ 80-ի գերեվարման փաստը չընդունելը կապված է մի շարք հանգամանքների հետ, որոնց շարքում Ս. Սահակյանը նշել է. *«Թաքցնելու պատճառը կարող է լինել քաղաքական և կարող է լինել արտակարգ զարգացումը, որ օրինակ գերիները, մնալով*

*դաշտային հրամանատարության ներքո կամ նույնիսկ կենտրոնական իշխանությունների ներքո, բայց ենթարկվելով բռնությունների, ուղղակի սպանվել են, և այստեղ աննպատակահարմար է սպանված գերու հաստատումը, որն ընդամենը մեծացնելու է պետության պատասխանատվությունը հանցագործությունների համար»*:

**Բացի 38 գերիներից, որոնք հաստատում է Ադրբեջանը, կան ևս 80 գերիներ, որոնց գերվարման փաստը Ադրբեջանը չի ընդունում:**

Բացի գերիների իրական թիվը թաքցնելը՝ հատկանշական է նաև այն փաստը, որ գերեվարումների դեպքերը շարունակվել են նաև հրադադարի հաստատումից հետո, ինչը վկայում է հայ-ադրբեջանական կոնֆլիկտի շարունակական բնույթի մասին, որն էլ իր հերթին բազավորված է թշնամական երկրի հայատյացության վրա, ինչի ապացույցներին կանդրադառնանք ստորև: Այսպես՝ իրավապաշտպան Ս. Սահակյանի փաստմամբ՝ «***մենք ունենք երկու անձ 38 հաստատվածներից, որոնք գերեվարվել են հոկտեմբերի վերջին, ունենք 3 քաղաքացիական անձ, որոնք 10-ի գիշեր 11-ի լույս առավոտյան են գերեվարվել, այսինքն՝ հայտարարության ստորագրումից անմիջապես հետո, իսկ մնացյալ դեպքերը տեղի են ունեցել հետագայում: Ունենք 30 [դեպք], որը տեղի է ունեցել 2020 թ. դեկտեմբերին, 2 դեպք՝ 2021 թ. մայիսին և 1 դեպք՝ 2021 թ. նոյեմբերին: Այսինքն՝ փոքր թիվն է, որ վերաբերում է հենց պատերազմի ընթացքում կամ պատերազմից անմիջապես հետո գերեվարումներին՝ 5-ը***: Մնացյալը տեղի են ունեցել սահմանային խնդիրների ժամանակ»: **Ընդ որում՝ գերեվարվածների մեջ ոչ միայն զինվորականներ են, այլև քաղաքացիական անձինք**, որոնցից 3-ի՝ մինչ այժմ գերության մեջ գտնվելու փաստը ներկա պահին հաստատված է: Նրանցից երկուսը՝ Գևորգ Սուջյանը և Դավիթ Դավթյանը, գերեվարվել են նոյեմբերի 11-ին, այսինքն՝ անմիջապես հրադադարի հաստատումից հետո

Շուշիի ճանապարհին։ **Արցախի Հանրապետությունից անհետ կորած են 19 քաղաքացիական անձինք և 33 զինվորականներ։ Ընդ որում՝ այդ 33 անձանց մեջ կան մարդիկ, որոնք ընդգրկված են վերը նշված 80 հոգու ցուցակում**, որոնց գերության վերաբերյալ մենք ունենք փաստական տվյալներ և որոնց վերաբերյալ ՄԻԵԴ-ում հայցեր են ներկայացված։
Ընդհանուր առմամբ Արցախի մարդու իրավունքների պաշտպան Գեղամ Ստեփանյանի փոխանցմամբ՝ հրադադարի այս 1.5 տարվա ընթացքում 10-ից ավելի դեպք է եղել, երբ շփման գծի տարբեր հատվածներում տեղակայված Արցախի Հանրապետության համայնքներից մարդիկ մոլորվելու հետևանքով կամ այլ պատճառներով հայտնվել են Ադրբեջանի վերահսկողության տակ գտնվող տարածքում, բայց ռուսական խաղաղապահների միջամտությամբ վերադարձվել են։
Այսպիսով՝ ևս մեկ անգամ հստակեցնենք խնդիրը՝ նշելով, որ այժմ ադրբեջանական կողմն ընդունում է միայն 38 անձանց գերեվարման փաստը և ժխտում է այլ անձանց՝ Ադրբեջանում պահվելու հանգամանքը։
**Սակայն հայկական կողմի փաստահավաք առաքելության ընթացքում պարզվել է, որ բացի վերոնշյալ 38-ը կան ևս 80 անձինք, որոնք պաշտոնապես համարվում են անհետ կորած, սակայն նրանց վերջին անգամ տեսել են Ադրբեջանի կողմից օկուպացված տարածքներում՝ ադրբեջանցի զինվորականների վերահսկողության տակ։**
Անհետ կորածների մասով առկա է 2022 թ.-ի Կարմիր խաչի զեկույցը, որտեղ նշված է, որ 2020 թ.-ից ի վեր՝ հայկական կողմի անհետ կորածների թիվը հասնում է 300-ի[3]։ Մինչդեռ ՀՀ դե-ֆակտո քննչական կոմիտեն հայտնել է անհետ կորած ընդամենը 199 զինծառայողի և 21 քաղաքացիական անձի մասին[4]։ Սա հերթական դեպքն է, երբ ՀՀ դե-ֆակտո իշխանությունների կողմից արված հայտարարությունները հակասում են փորձագիտական շրջանակների կողմից արված հայտարարություններին։ Ընդ որում՝ այդ փորձագիտական շրջանակների մեջ մտնում են թե՛ հայկական կողմի, թե՛ միջազգային մակարդակի մասնագետներ։

Սա դեռ ամենը չէ: Այժմ ՀՀ դե-ֆակտո իշխանություններն իրենց հայտարարություններում առաջ են տանում նաև ադրբեջանական թեզեր: Այսպես՝ ՀՀ դե-ֆակտո վարչապետը մայիսի 25-ին կայացած ԱԺ նիստի ժամանակ նշել է. «*Մենք մինչև այս պահը հաստատված 38, 39 գերի ունենք*»[5]: Դրանից առաջ մարտի 21-ին ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նիստի ժամանակ դե-ֆակտո ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հայտարարել է. «*Ինչպես գիտեք, հարգելի՛ գործընկերներ, Ադրբեջան[ում] դեռևս 38 անձ է պահվում՝ ռազմագերի, պատանդ և այլ կարգավիճակով պահվող անձինք: 38-ից 3-ը քաղաքացիական անձինք են*»[6]: Մինչ օրս էլ ՀՀ դե-ֆակտո իշխանության ներկայացուցիչները կրկնում են այս թեզը՝ կատարելով ՀՀ-ում ադրբեջանական բարձրախոների դեր:

Ադրբեջանական կողմը նաև առաջ է տանում զանազան թեզեր հայ գերիների կարգավիճակի վերաբերյալ: Մասնավորապես, որ նրանք ահաբեկիչներ են, որ հրադադարից հետո գերեվարվածները դիվերսիոն ներխուժման փորձ են կատարել Ադրբեջանի տարածք: Ընդ որում՝ անկախ գերեվարվածի զինվորական կամ քաղաքացիական լինելու փաստից՝ հայ գերիներին վերագրվում են կեղծ մեղադրանքներ դրանցից բխող իրավական հետևանքներով: Հայտնի ադրբեջանական գործելակերպի համաձայն՝ ադրբեջանցի զինվորները նախ առևանգում են քաղաքացիական անձանց, ապա նրանց վերագրում են այս կամ այն հանցանքը: Բազմաթիվ դեպքեր են եղել, երբ Ադրբեջանն առևանգել է, օրինակ, սահմանային հատվածում հովիվների կամ այլ անձանց ու ներկայացրել որպես դիվերսանտներ: Ներկայումս Ադրբեջանում պահվող և գերեվարության հանգամանքը հաստատված 38 անձինք մեղադրվում են զանազան պատերազմական հանցագործությունների, ահաբեկչության մեջ, և, ըստ այդմ, նրանց նկատմամբ կան հարուցված քրեական գործեր և ընթանում են շինծու դատավարություններ: **Մասնավորապես՝ 38-ից 37-ը ենթարկվել են քրեական պատասխանատվության, նրանց առնչությամբ կան դատական**

**ակտեր:** Հոդվածները սկզբում առաջադրում էին ապօրինի սահման անցնելու, ապօրինի զենք պահելու, պայթուցիկ նյութերի, ահաբեկչության, խոշտանգումների մասով: Հետագայում ահաբեկչության մասին հոդվածները շատերի վրայից հանվեցին, դատարանը արդարացրեց նրանց, բայց դատական ակտեր կայացվեցին, օրինակ, ապօրինի սահման հատելու կամ ապօրինի զենք կրելու համար: Գործերի ճնշող մեծամասնությունը վերաբերում է ապօրինի սահման հատելուն: Այս պահին մենք ունենք 3 քաղաքացիական անձ, որոնց Ադրբեջանը փորձում է ներկայացնել որպես ահաբեկիչներ և վեճի առարկա է դարձնում նաև նրանց քաղաքացիական անձ լինելը:

Հայ խաղաղ բնակիչների և ռազմագերիների՝ Ադրբեջանում ազատազրկման դատավճիռները հիմնված են բացառապես խոշտանգումների, անմարդկային վերաբերմունքի և հարկադրանքի տակ կորզված խոստովանության վրա՝ չկատարված հանցագործությունների վերաբերյալ: Հայրենադարձված գերիները նշում են, որ իրենց ստիպել են կեղծ խոստովանություններ անել չկատարված հանցագործությունների համար, իսկ չենթարկվելու դեպքում ստիպել են կրկնել ասվածները հաշվեհարդարի սպառնալիքի և ահաբեկման պայմաններում[7]:

Անշուշտ, ադրբեջանական կողմի նման մանիպուլյացիաները անձանց գերեվարման ժամանակահատվածի և, ըստ այդմ, իրենց կարգավիճակի վերաբերյալ սին են և անհիմն: Որպես կանոն՝ միջազգային իրավունքի առումով նշանակություն չունի գերեվարումը եղել է ակտիվ հակամարտության ընթացքում, թե դադարից հետո: Եթե գերեվարումը կապված է կոնֆլիկտի հետ, ապա տվյալ անձը նույնպես համարվում է գերի կամ ռազմագերի, այսինքն՝ ինքնին ակտիվ գործողությունների դադարը որոշիչ գործոն չէ, որից հետո անձը կարող է կորցնել միջազգային իրավական պաշտպանությունը: Սրա դասական օրինակը հենց Խծաբերդի խումբն է, որոնք թեև գերեվարվել են դեկտեմբերի կեսերին, սակայն նրանց

գերեվարումը կապված է եղել հայ-ադրբեջանական կոնֆլիկտի հետ և հենց դրա առնչությամբ է եղել։
Ինչ վերաբերում է միջազգային իրավական տերմիններին, դրանց միջև ևս առկա է որոշակի տարբերություն։ Այսօր լայնորեն շրջանառվող երեք տերմիններն են՝ «*PoW*» (prisoner of war), «*captive*» և «*detainee*»։ «PoW»-ը ռազմագերին է, «captive»-ը քաղաքացիական գերին է, իսկ «detainee»-ն ցանկացած հիմքով անազատության մեջ պահվող անձը, որի տակ մենք կարող ենք հասկանալ և՛ առևանգվածին, և՛ հանցագործության համար պահվածին։ **Այս երեքից այսօր թերևս ամենից լայն շրջանառությունն ունի «detainee» տերմինը՝ հատկապես միջազգային հանրության շրջանում։ Սա ընդհանուր տերմին է։ Եթե խոսենք տրամաբանական տերմիններով, ապա այստեղ ընդհանուրի ու մասի հարաբերակցության հարց կա։**
Անազատության մեջ պահվող անձանց հասկացությունն իր մեջ ներառում է գերեվարման հիմքով անազատության մեջ գտնվողին, բայց կարող է ներառել նաև հանցագործության պատճառով անազատության մեջ գտնվողին։ Միջազգային հանրությունը խուսափում է միայն գերի տերմինը օգտագործելուց և օգտագործում է ավելի լայն հասկացություն, որն իր մեջ ներառում է գերիներին։ Քանի որ գերիների խումբը մեծ է, նրանք ուղիղ այդ խմբից դուրս են բերել գերիներին և, այլ սահմանում ու թվարկում չտալու նկատառումներից ելնելով, օգտագործում են ընդհանրական տերմինը։ Սակայն անկախ այն բանից, թե ինչ տերմին է այս պահին կիրառվում հայ գերիների կարգավիճակը բնութագրելու համար՝ գերեվարող կողմին դա որևէ իրավունք չի վերապահում դրսևորելու անմարդկային վերաբերմունք գերեվարվածի նկատմամբ։ Այսպես՝ կա ռազմագերի և գերի տարբերակումը, որը կարևոր տարբերակում է և որը գալիս է միջազգային մարդասիրական իրավունքի կարևոր սկզբունքներից։ Ամբողջ պատերազմի ընթացքում քաղաքացիական անձինք պետք է տարբերվեն կոմբատանտներից, որոնք անմիջական մասնակից են և զենք կրելու ուժով կարող են նաև լինել լեգիտիմ թիրախ, քանի որ կոմբատանտներին կարելի է

սպանել։ Այն կոմբատանտը, որը զենքը վայր է դրել և գերեվարվել է, ռազմագերի է, և նրանց արժեքը նաև ռազմական հետախուզության տեսանկյունից այլ է, քան քաղաքացիական անձանց, որովհետև իրենց կոմբատանտ լինելու ուժով կարող են ունենալ և ունեն հասանելիություն ռազմական գաղտնիք հանդիսացող տեղեկություններին։ Ուստի՝ մեծ է նաև հակառակորդ կողմի գայթակղությունը՝ կոշտ և անթույլատրելի մեթոդների կիրառությամբ շահագործելու ռազմագերիներին՝ իրենց հետաքրքրող տեղեկությունները կորզելու առումով։ Եվ զենքը վայր դրած զինվորականի դեպքում անմիջապես գործում են միջազգային իրավունքի՝ գերեվարմանը վերաբերող նորմերը, բայց այս անձինք ևս հայտնվում են պաշտպանության ներքո, այսինքն, եթե անձն այլևս վտանգ չի ներկայացնում հակառակորդի զինվորի նկատմամբ, ապա նա օգտվում է միջազգային պաշտպանությունից, և նրանց հետ կապված կան որոշակի գործընթացներ։ Ի տարբերություն զինվորականների՝ քաղաքացիական անձինք չեն կարող անմիջապես գերեվարվել։ Նրանց մասով գործում է ներկալման հնարավորություն, երբ անվտանգային նկատառումներով կարող է նրանց տեղաշարժվելու ազատությունը սահմանափակվել։ Պետք է հակառակորդի անվտանգությանը սպառնալիք ներկայացնի քաղաքացիական անձը, որպեսզի առաջ գա գերեվարելու անհրաժեշտությունը։ Իրականության մեջ այդ բոլոր քաղաքացիական անձինք, որոնք գերեվարվել էին, գերեվարման ենթակա անձինք չէին և առավելագույնը նրանց հանդեպ կարող էր կիրառվել ներկալումը՝ որպես իրավունքի սահմանափակման ռեժիմ, և Ադրբեջանը, նրանց գերեվարելով, խախտել է շատ իրավունքներ, այդ թվում նաև՝ անձնական ազատության իրավունքը, որովհետև նրանց մեկուսացման մեջ պահելը որևէ ձևով արտոնված չէ միջազգային մարդասիրական իրավունքով։

Այսպիսով՝ Ադրբեջանը խախտել է միջազգային մարդասիրական իրավունքի նորմերը՝ ցուցաբերելով խտրական և դաժան վերաբերմունք հայ գերիների նկատմամբ։ Մասնավորապես՝ Ադրբեջանը կոպտորեն խախտել է Ժնևի III

կոնվենցիան ռազմագերիների նկատմամբ վերաբերմունքի առնչությամբ և Ժնևի IV կոնվենցիան պատերազմի ժամանակ քաղաքացիական անձանց պաշտպանության առնչությամբ, որոնց պարտավոր է հետևել որպես ՄԱԿ անդամ: Այս կոնվենցիաները սահմանում են պատերազական պայմաններում խոցելի խմբերի նկատմամբ մարդասիրական վերաբերմունքի անհրաժեշտությունը: Ադրբեջանը մասսայաբար է խախտել դրանք՝ լինելով առանձնահատուկ դաժան հատկապես հայ գերիների նկատմամբ:

Նախ, եթե ուսումնասիրենք Ադրբեջանին առնչվող խոշտանգումների կանխարգելման կոմիտեի զեկույցը[8], ապա կտեսնենք, որ սեփական քաղաքացիներին խոշտանգելիս կամ անմարդկային, նվաստացուցիչ վերաբեմունք դրսևորելիս էլ իրենց հատուկ ծառայությունները ունեն որոշակի ձեռագիր և կախված նրանից, թե անձը որ հաստատության ենթակայության տակ է պահվում (օրինակ՝ ԱԱԾ-ի, ՊՆ-ի արդարադատության նախարարության, թե ոստիկանության), կիրառվող մեթոդները և դրսևորումները տարբեր են և դրանք օրինաչափորեն դուրսբերելի են: Նախ՝ կան ընդհանուր օրինաչափություններ, որոնք ազդել են մեր գերիների և ռազմագերիների վրա: Երկրորդը՝ հայերի հանդեպ եղած ատելությամբ պայմանավորված ստացել են ավելի ինտենսիվ աստիճան: Բոլոր հայ գերիների նկատմամբ՝ անկախ սեռից, տարիքից, քաղաքացիական կամ զինվորական լինելուց, կիրառվել է դաժան վերաբերմունք, խոշտանգումներ: Գերիները պարբերաբար ենթարկվել են ծեծի, զրկվել են սննդից, քնից, զուրկ են եղել տարրական հիգիենիկ պայմաններից: Ֆիզիկական կտտանքներից զատ ենթարկվել են նաև հոգեբանական բռնության, ծաղրի է ենթարկվել նրանց էթնիկ ծագումը, կրոնական պատկանելությունը: Գերիներին պարբերաբար ստիպել են կրկնել «Ղարաբաղն Ադրբեջան է» նախադասությունը և խստորեն պատժել չենթարկվելու դեպքում: Հայաստանի[9] և Արցախի[10] մարդու իրավունքների պաշտպանը ներկայացրել են այս թեմայով մանրամասն զեկույց՝ զրուցելով

հայրենադարձված գերիների հետ և դուրս բերելով նրանց նկատմամբ կիրառված կտտանքների տեսակներն ու ընդհանուր գծերը։ Այստեղ երկու գործոն է համատեղվում. մեկը, որ Ադրբեջանում խոշտանգում երևույթը պրակտիկ է և երկրորդը, որ հայերի հանդեպ ատելությունը էսկալացրել է այս դրսևորումները և ավելի դաժան դրսևորումներ են ստացվել հայերի նկատմամբ։ **Այս կոնտեքստում կարևոր է նշել, որ եթե անձը նախկին պատերազմների (1990-ականներ և 2016 թ.) մասնակից է եղել և նախկին պատերազմում հաղթողի հոգեբանություն է ունեցել, սա հանգեցրել է ավելի ուժեղ պատժիչ գործողությունների:** Եվ շատ մեծ նշանակություն ունի նաև անձի՝ զինվորականության մեջ զբաղեցրած դիրքը։ Առավել մեղմ վերաբերվել են պարտադիր զինծառայողներին, դրանից հետո կամավորներին և ամենադաժան վերաբերմունքի արժանացրել են սպայական կազմին։ Տարեցների, կանանց և քաղաքացիական անձանց նկատմամբ չնչին, բայց հարաբերականորեն մեղմ են վարվել, բայց ընդհանուր առմամբ այս մարդիկ պաշտպանված չեն եղել բռնությունից և խոշտանգումներից, այսինքն՝ մարդասիրության տարրեր խոցելի խմբերի նկատմամբ չեն կիրառվել։ Մարդասիրական իրավունքի խախտում է նաև հայ զինծառայողների նկատմամբ քրեական գործ հարուցելը, որով Ադրբեջանը, փաստորեն, ժխտում է հայ զինծառայողների ռազմագերու կարգավիճակը և հետևաբար չի ապահովում Ժնևի III կոնվենցիայով նախատեսված պաշտպանությունը։

Այսպիսով՝ համոզվում ենք, որ խոշտանգումները հայ գերիների նկատմամբ կրել են և կրում են մասսայական բնույթ։ Սրա համար հիմք է ծառայում առաջին հերթին Ադրբեջանում հայատյացության բարձր մակարդակը։ Այսպիսի իրավիճակում, մեղմ ասած, դժվար է խոսել հորինված «խաղաղության դարաշրջանի» կամ խաղաղ համակեցության մասին, որի մեծ ջատագովներն են ՀՀ դե-ֆակտո իշխանությունները։

Հումանիտար տեսանկյունից կապը գերիների և նրանց հարազատների միջև տեղի է ունենում Կարմիր խաչի միջոցով։ Այստեղ կենտրոնական

դերակատարումը հենց Կարմիր խաչինն է։ Հայրենադարձության հարցերում, բնականաբար, այս կառույցը սահմանափակ դեր ունի, որը վերջին ժամանակներում ավելի է ստորադասվել, բայց կապը պահելու և որոշ մարդասիրական օգնություն ցույց տալու մասով հիմնական դերակատարը հենց Կարմիր խաչն է։ Երբ Ադրբեջանի իշխանությունները հնարավորություն են տվել չեզոք կողմերին տեսակցել գերիներին, այդ կողմերն են եղել Կարմիր խաչը և որոշ դեպքերում նաև Ռուսաստանի կամ այլ երկրների ներկայացուցիչները։ Հայտնի է, որ Կարմիր խաչի վերջին այցելությունը հայ գերիներին եղել է 2022 թ.-ի հուլիսի վերջին[11]։ Սակայն որևէ տեղեկություն գերիների վիճակի, նրանց թվի կամ այլ մանրամասների հետ կապված կազմակերպությունը, բնականաբար, չի հայտնում։

## ԳԼՈՒԽ 2

## Գերիների հարցի շահարկումը ներքաղաքական կյանքում

Նոյեմբերի 9-ի եռակողմ գրավոր հայտարարությունից հետո ՀՀ դե-ֆակտո իշխանությունները հաճախ են հնչեցրել այն թեզը, որ մեր գերիների վերադարձի ձգձգումը հետևանք է ընդդիմության կողմից կազմակերպված բողոքի ակցիաների և ցույցերի: Իբրև թե բողոքի ակցիաները դարձել են Ադրբեջանի ձեռքին հարմար գործիք՝ հետաձգելու գերիների հայրենադարձումը: Այս խաղաքարտը անընդմեջ օգտագործելով՝ դե-ֆակտո իշխանություններին նաև հաջողվում էր մոբիլիզացնել գերիների հարազատներից ոմանց ազգային պայքարի ուժերի դեմ: Վերջիններս, բնականաբար, գտնվելով ծանր էմոցիոնալ վիճակում՝ հեշտությամբ էին ընկնում դե-ֆակտո իշխանությունների դավադիր ծուղակը, քանի որ գիտակցում էին, որ իրենց հարազատները գտնվում են խոցելի վիճակում Բաքվի բանտերում, և իրենք ևս պակաս խոցելի վիճակում չէին: Բացի ընդդիմության դեմ մոբիլիզացնելուց՝ ՀՀ դե-ֆակտո իշխանությունները նաև շարունակ մսխել են գերիների հարազատների զայրույթը՝ շարունակ ուղղորդելով վերջիններիս բողոքի ալիքը սխալ ուղղությամբ, այն է՝ սխալ կառույցների ուղղությամբ, որոնք փաստացի որևէ որոշիչ դեր չունեն այս հարցի լուծման առնչությամբ, քանի որ բոլոր լծակների տիրապետողը հենց գործադիրն է և գործադիրի գլուխ կանգնած դե-ֆակտո վարչապետը: Ժամանակը ցույց տվեց, որ դե-ֆակտո իշխանությունների այս թեզերն ունեին ընդամենը մանիպուլյատիվ բնույթ, քանի որ այս երկու տարվա ընթացքում ընդդիմության ակցիաների միջակայքում եղել են բավականին մեծ դադարներ, որոնց ընթացքում, սակայն, այդպես էլ բոլոր գերիները չեն վերադարձվել: **Մինչդեռ հիշեցնենք, որ այս կետը ենթակա է պարտադիր կերպով իրականացման և բխում է նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությունից: Այսինքն՝ անկախ նրանից, թե քանի բողոքի ակցիաներ կլինեին երկրի ներսում, դե-ֆակտո իշխանությունները**

**պարտավոր էին հետևողական լինել, որ այս կետն անհապաղ դառնա իրականություն:** Մինչդեռ ի՞նչ արեցին դե-ֆակտո իշխանությունները. եռակողմ հայտարարության ընդունումից շատ չանցած՝ Ադրբեջանին վերադարձրին երկու մարդասպան հանցագործների՝ դիվերսանտներ Դիլհամ Ասկերովին և Շահբազ Ղուլիևին այսպես կոչված «բոլորը բոլորի դիմաց» սկզբունքի համաձայն, սակայն, ինչպես տեսնում ենք, հայկական կողմն այդպես էլ չստացավ բոլոր գերիներին: Դե-ֆակտո իշխանությունների այս քայլը մարդու իրավունքների կոպիտ խախտում էր: Այս անձինք կարող էին տեղափոխվել Ադրբեջան բացառապես մեկ նպատակով՝ պատիժը սեփական երկրում կրելու, բայց եթե հաշվի առնենք ընդհանուր անպատժելիությունը, սա այն դեպքն է, որ պատժի հետագա կրումը անիրագործելի էր լինելու և անգամ այդ նկատառումներից ելնելով՝ անթույլատրելի էր այս անձանց հանձնումը: Այսպիսով, մի քանի կարևոր կետեր կան, որոնք պետք է առանձնացնել այս մասով.

- Դիվերսանտներին վերադարձրել են որպես ռազմագերի, բայց իրենք փաստացի հանցագործներ են, այսինքն՝ ՀՀ դե-ֆակտո իշխանությունները խախտել են հանցագործների՝ Արցախի դատարանի կողմից սահմանված ցմահ ազատազրկման վճիռը:
- Ադրբեջանցի այս դիվերսանտները կապ չունեն պատերազմի ժամանակ գերիների փոխանակման համաձայնության հետ, քանի որ վաղուց են դատվել:
- Հայկական կողմն ունի վճիռ, ընդ որում՝ Արցախի դատարանի կողմից, որով արձանագրված է եղել հանցագործություն և ի թիվս այլ հանցագործությունների արձանագրված է եղել անչափահաս երեխայի սպանություն, և զոհը ոչ թե մեկն է եղել, այլ մի քանիսը: Նաև այդ դեպքերը տեսաձայնագրված են, այսինքն՝ ապացույցների խնդիր չկա և փաստը, որ այս անձինք հանցագործներ են, անհերքելի է:

Այս ամենը խոսում է մեկ բանի մասին. ՀՀ դե-ֆակտո իշխանությունները գերիների վերադարձով զբաղվում են ոչ թե եռակողմ հայտարարության կոնտեքստում, այսինքն՝ պարտադիր սկզբունքով և առանց նախապայմանների, այլ գնում են ինչ-ինչ զիջումների, որի դիմաց էլ ստանում են գերիների որոշ խումբ: Միով բանիվ՝ հարցը տեղափոխել են «առևտրի» դաշտ: Այդպիսի օրինակներից է Վարանդայի և Ակնայի ականապատ դաշտերի քարտեզների տրամադրումն ադրբեջանական կողմին 15 գերիների դիմաց: Ընդ որում՝ այդ քայլին հայկական դե-ֆակտո կողմը գնացել է ՄԱԿ-ի Միջազգային դատարանի որոշման հրապարակումից երեք օր առաջ, այսպես ասած, «բարի կամք դրսևորելով...»: Ի՞նչով է պայմանավորված նման մեծահոգությունն այն պարագայում, երբ Ադրբեջանը բացարձակապես «բարի կամք» չի դրսևորել հայկական կողմի նկատմամբ և նման մտադրություն էլ չունի: Իսկ կարո՞ղ էին արդյոք ՀՀ դե-ֆակտո իշխանությունները չգնալ այս քայլին՝ պնդելով, որ ոչ մի փոխզիջման չեն գնա, մինչև չվերադարձվեն անխտիր բոլոր գերիները: Կարծում ենք, որ միանշանակ այո՛: Նույն սցենարով նրանք կարող էին գործել նաև երկու դիվերսանտների դեպքում՝ չվերադարձնելով նրանց մինչև մեր գերիների ամբողջական հայրենադարձումը, իսկ Ադրբեջանի կողմից մերժում ստանալու դեպքում միջազգային աղմուկ բարձրացնեին և այդպիսով ճնշում գործադրեին թշնամու վրա: Սակայն վերը նշվածներից ոչինչ էլ չի արվել, ինչը խոսում է դե-ֆակտո իշխաությունների կողմից բանակցային ձիրքի և հայանպաստ լուծումներ ստանալու նպատակի, կամքի ու ցանկության բացակայության մասին:

**Ի տարբերություն հայկական դե-ֆակտո կողմի՝ Ադրբեջանը բաց չի թողնում առիթը չնչին հնարավորություններից կառչելու և հայկական կողմին թիրախավորելու: Այսպես՝ ադրբեջանական կողմը բազմիցս հնչեցրել է իբր դեռևս Արցախյան առաջին պատերազմի ժամանակ անհետ կորած 4000 ադրբեջանցիների թեզը[12]:** Այս քայլով Ադրբեջանը նախ բարոյական իրավունք է ձեռք բերում ձգձգելու խնդիրը՝ ցույց տալով, որ

իրենք էլ են զոհ, և տևական ժամանակ այդ ցավը հասարակությունը կրել է։ Դա բնականոն է, ուստի՝ եթե պատճառվել է իրենց, ուրեմն ո՞րն է բարոյական ակնկալիքը չպատճառելու հայկական կողմին։ Այլ կերպ ասած՝ բարոյականության տիրույթում Ադրբեջանն արդարացնում է իր գործողությունները և նաև հոգեբանական առավելություն է ստանում սեփական հասարակության շրջանում։ Եթե հասարակությունը սնվում է հակահայկական տրամադրություններով և ինքն էլ ցավ է պատճառում հայերին, ուրեմն բարձրանում է իշխանությունների հեղինակությունը սեփական ժողովրդի շրջանում։ Այստեղ նախ փորձ է արվում հավասարության նշան դնել և այդ հավասարության նշանի միջոցով կանխել միջազգային հանրության աջակցությունը հայերին և Հայաստանին, առանց որի մենք լուրջ տեղաշարժ կամ առաջընթաց չենք ունենա։ Միջազգային հանրության արձագանքը այլ է լինելու, երբ երկու երկրներին դիտարկի «տուժող և հանցագործ» համեմատության տիրույթում և երբ հասկանա, որ հայկական կողմն ադրբեջանական ագրեսիայի և հանցագործությունների զոհ է։ Այս արհեստական հավասարության միջոցով մեղմվում է միջազգային հանրության հնարավոր կոշտ արձագանքը։ Եվ սրանով ադրբեջանցիները ցույց են տալիս, որ այս 30 տարիների ընթացքում նրանք ունեցել են խնդիրներ, որը միջազգային հանրությունն ունակ չի եղել լուծելու կամ չի կամեցել, իսկ հիմա կարող են այս քայլով մատնանշել ոչ արդյունավետ միջազգային համագործակցությունը։ Այսինքն՝ իրենք ունեն լեգիտիմ հիմք «ո՛չ» ասելու կամ չհամագործակցելու այն կառույցների հետ, որոնք պետք է լուծեն մարդասիրական խնդիրները՝ պատճառաբանելով, որ այդ կառույցները ձախողել են լուծել ադրբեջանական կողմին հուզող մարդասիրական խնդիրները։ Այսպիսով՝ արդյունքում ունենում ենք իրավիճակ, երբ հայ գերիների հարցն ուշադրության կենտրոնից տեղափոխվում է ծայրամաս և հետաձգվում անժամկետ կարգով։
ՀՀ դե-ֆակտո իշխանությունների անբարեխիղճ և անպատասխանատու գործելակերպի մասին է խոսում նաև այն, որ բազմիցս դե-ֆակտո

իշխանականների կողմից, մասնավորապես՝ դե-ֆակտո վարչապետի կողմից հրապարակվել են գերիների լուսանկարներն ու անձնական տվյալները: Այս ամեն նրանք արել են, բնականաբար, իրենց փառքի համար՝ արհամարհելով գերիների անձնական տվյալների արտահոսքի անթույլատրելիության, անվտանգության և արժանապատվության գործոնները: Նույն կերպ հայ գերիների հետ վարվել է ադրբեջանական կողմը՝ նպատակ հետապնդելով վերջիններիս հանրային պարսավանքի և ծաղրի առարկա դարձնելը: Երկու պարագայում էլ գործ ունենք անթույլատրելի գործելակերպի հետ՝ մի դեպքում թշնամու, մյուս դեպքում դե-ֆակտո վարչակարգի կողմից: Նման գործելակերպը նաև արգելված է միջազգային իրավունքով: Մասնավորապես, Ժնևի III կոնվենցիայի 13-րդ հոդվածի 2-րդ պարբերությունում սահմանվում է. *«Վիրավորանքի և հանրային հետաքրքրասիրության առարկա դառնալու կանխարգելումը կարևոր բաղադրիչ է բանտարկյալների բարոյական ամբողջականությունը պահպանելու հարցում: Սա ենթադրում է արգելք՝ բանտարկյալներին քարոզչական նյութերում օգտագործելու՝ լինի դա անձամբ, լուսանկարի կամ տեսանյութի միջոցով, որում նրանք ցուցադրվում են»*[13]:

Այստեղ հնարավոր չէ նաև չհիշել ՀՀ դե-ֆակտո վարչապետի կողմից արտահերթ խորհրդարանական ընտրությունների քարոզարշավներից մեկի ժամանակ արված հայտարարությունը, որ *«նրանք (գերիները – Ս.Ն.) մեզ կներեն մի ամիս, երկու ամիս ավել գերության մեջ մնալու համար»*[14]: Այս արտահայտությունը ևս մեկ անգամ ապացուցում է, որ գերիների հարցը ՀՀ դե-ֆակտո իշխանությունների համար ոչ ավելին է, քան քաղաքական գործիք՝ իրենց իշխանությունը պահելու հարցում, և այս խնդրի լուծման համար իրապես պատասխանատվություն կրելու կամք նրանք բնավ չունեն: Նրանք պատրաստ են պատասխանատվությունը բարդել բոլորի վրա՝ բացի իրենցից: Հիշեցնենք, որ նման մի դեպք տեղի էր ունեցել 2021 թ.-ի ապրիլի 8-ին, երբ դատարկ ինքնաթիռով Բավից Երևան էր ժամանել ռուսական խաղաղապահ զորքերի նախկին հրամանատար Ռուստամ Մուրադովը, իսկ

իշխանական օղակները՝ ի դեմս դե-ֆակտո վարչապետի նախկին դե-ֆակտո խոսնակ Մանե Գևորգյանի, հասցրել էին մինչ այդ ապատեղեկատվություն տարածել, իբր Երևան է գալիս գերիների հերթական խումբը: Դատարկ ինքնաթիռը տեսնելով՝ ծնողները, որոնք հույսով լի սպասում էին Էրեբունի օդանավակայանում, մեծ դժգոհություն էին բարձրացրել: Իսկ իշխանությունները, առանց հապաղելու արթնացնելով իրենց բներում քուն մտած հակառուսական օղակներին, սկսել էին ամեն ինչ Ռ. Մուրադովի գլխին ջարդելու օպերացիան: Սակայն երբ 2021 թ.-ի հոկտեմբերի 19-ի երեկոյան վերադարձել էր հայ գերիների 5 հոգանոց խումբը, օդանավակայանում նրանց դիմավորում էին ՀՀ-ում ՌԴ դեսպան Սերգեյ Կոպիրկինը, խաղաղապահ ուժերի արդեն իսկ նախկին հրամանատարներ Ռ. Մուրադովը, Միխայիլ Կոսաբոկովը և ՌԴ խաղաղապահ ուժերի ներկայիս հրամանատար Գենադի Անաշկինը: Միով բանիվ՝ բոլորը՝ բացի ՀՀ դե-ֆակտո իշխանավորներից: Սա ուղղակի արհամարհանքի հերթական դրսևորումն էր նրանց կողմից:

Հավելենք նաև այն, որ ՀՀ դե-ֆակտո իշխանությունները մշտապես ձգտել են անմիջական բանակցություններ վարել ադրբեջանական կողմի հետ՝ դուրս մղելով ռուսական միջնորդության գործոնը: Եվ այստեղ տրամաբանական հարց է առաջանում. ինչո՞ւ պետք է այս պարագայում ռուսական կողմը լուծի մեր խնդիրները: Պատկերավոր ասած՝ «եթե առանց միջնորդ բանակցություններ եք ուզում, առանց միջնորդի էլ լուծեք ձեր խնդիրները»:

Հանգամանքների նման դասավորությունը հարց է առաջացնում, թե ինչ վիճակում է հիմա այս խնդիրը, և ովքեր են զբաղվում դրանով: Այս պահին մենք ունենք 151 հայրենադարձված գերի: Ինչ վերաբերում է կառույցներին, պետական կառույցներից կա գերիների և անհետ կորածների հարցերով զբաղվող հանձնաժողով, որը տեղեկատվությունը հավաքագրող գործունեություն է իրականացնում, և ո՛չ քաղաքական գործընթացներում դերակատարություն ունի, ո՛չ էլ Ադրբեջանի հետ երկխոսելու

հնարավորություն։ Այսինքն՝ ֆորմալ առումով կա կառույց այդ հարցերով զբաղվող, որը, սակայն, լծակներ և գործնական հնարավորություններ չունի գործընթացի վրա ազդեցություն ունենալու համար։ Քաղաքական մասով գործընթացը վարում է ՀՀ դե-ֆակտո վարչապետը եռակողմ ձևաչափի շրջանակներում, երկկողմ շփումների միջոցով, իր անմիջական մասնակցությամբ կամ իր իմացությամբ և հրահանգավորմամբ այլ պաշտոնյաների մակարդակով։ Այսինքն՝ քաղաքական առումով գործընթացի հիմնական պատասխանատուն և դերակատարը դե-ֆակտո վարչապետն է, որը գործում է կա՛մ անձամբ, կա՛մ իր դերակատարների միջոցով։ Քննարկումներ լինում են նաև այլ ձևաչափերով, որոնցից մեկի միջոցով կնքվեց պայմանագիրը օրինակ Եվրոպական Միության միջնորդությամբ։ Վերջինս, ինչպես նաև ԱՄՆ-ը, Ֆրանսիան և այլ երկրներ փորձում են բարձրացնել իրենց դերակատարությունը։ Եվ այստեղ, անկասկած, կա մրցակցություն աշխարհաքաղաքական տարբեր բևեռների միջև, որոնք փորձում են իրենց կշիռը մեծացնել այս հարցում և ստանալ իրենց օգուտները։ Միջազգային կառույցները քաղաքական գործընթացներում ներգրավված լինելուց զատ ունեն նաև մարդու իրավունքներին առնչվող գործիքներ։ Օրինակ՝ ԱՄՆ բանաձևեր ընդունեց օրենսդիրի մակարդակով։ Այս առումով նաև իրավական որոշակի գործունեություն է ծավալել Եվրոպական հանձնաժողովը։ Այսինքն՝ այս կառոյցների քաղաքական մարմինները, պատասխանատու լինելով ժողովրդավարական ինստիտուտների և մարդու իրավունքների խնդիրների համար, նաև այս գործիքակազմի շրջանակներում են ներգրավվում և ընդունում «փափուկ իրավունք» հանդիսացող որոշ փաստաթղթեր։ Սակայն վսատահաբար այս գործընթացները կախված են քաղաքական որոշումներից։ Վերոնշյալ կառույցներն այս պահին ունեն բավականին չեզոք կեցվածք, ընդգծված կերպով չեն աջակցում Հայաստանին, ինչն առաջին հերթին գալիս է իրենց աշխարհաքաղաքական շահերից։ Հիշեցնենք, որ Եվրոպան այս պահին հենց ադրբեջանական էներգակիրներն է դիտարկում

որպես այլընտրանք ռուսականին[15], և վստահաբար էներգետիկ և տնտեսական շահերը վեր կդասվեն մարդու իրավունքներից։
Մինչ այս պահը ՀՀ դե-ֆակտո իշխանությունների ներգրավվածության մակարդակն այս հարցում եղել է քարտեզների կամ տեղեկատվության դիմաց գերիների առաջին խմբաքանակի փոխանակումով, սակայն գերիների մեծամասնությունը վերադարձել է միջնորդ երկրների և միջազգային կազմակերպությունների հեղինակության և ջանքերի շնորհիվ։ Այսպիսով՝ կարևոր է հասկանալ, որ գերիների վերադարձը պայմանավորված է Հայաստանի վրա ճնշման և արտաքին քաղաքական պահանջներ պարտադրելու հետ։ Իսկ իրավականը մեկօրյա կամ այսպահային խնդիր չէ։ Եթե քաղաքական գործընթացները մի քիչ էլ ձգձգվեն և արդյունք չտան, ապա խնդիրը միայն այդ դեպքում հնարավոր կլինի հանգուցալուծել իրավական ճանապարհով։ Այդ նպատակով էլ իրավական գործընթացներ կան, որոնք ընթացքի մեջ են։ ՄԻԵԴ-ում գերիների հարցով ՀՀ ներկայացուցիչ Սիրանուշ Սահակյանը, ում հետ մենք հարցազրույց ենք վարել, իր թիմով ևս զբաղվում է հարցի լուծմանը նպաստող իրավական գործընթացներով։
Ուստի՝ ակհայտ է, որ գերիների վերադարձը գտնվում է այժմ քաղաքական տիրույթում և պետք է առաջնահերթ լուծում ստանա քաղաքական ճանապարհով։ Այստեղ տեղին է հիշել դե-ֆակտո վարչապետի կողմից արված ևս մեկ հայտարարություն. «*Մեր դիրքորոշումը եղել է և շարունակում է մնալ այն, որ հումանիտար հարցերը պետք չէ կապել քաղաքական հարցերին։ Դրանք առանձին հարց են։ Եվ հումանիտար հարցն առանձին՝ առանց քաղաքական փոխկապակցվածության իրենք իրենցով ավելի մեծ կշիռ և նշանակություն ունեն։ Եվ ընդհակառակը, երբ որ փոխկապակցվածության մեջ դնենք քաղաքական հարցերի հետ, մենք հարցի նշանակությունը, ընդհակառակը, կնվազեցնենք*»[16]։
Այն, որ միտքը միանգամայն աբսուրդային է, վեր է կասկածից։ Սակայն, ինչպես տեսնում ենք նա ասաց և հենց նա էլ դարձրեց այս հարցը

քաղաքական առևտրի թեմա՝ շահարկելով այն Հայաստանի ներքաղաքական կյանքում՝ Ադրբեջանի հետ քաղաքական առևտուր կատարելով։

Ի՞նչ ունենք արդյունքում.

- զանազան եռակողմ հանդիպումների արդյունքում ընդունված
- հայտարարություններում չի բարձրացվում գերիների հարցը,
- չի սահմանվում այս կետի իրականացումը՝ որպես առաջնահերթություն, ունենք գերիների հարազատներ, որոնք անդադար բողոքի ակցիաներ են իրականացնում տարբեր կառույցների, գերատեսչությունների մոտ։ Եթե գերիների և անհետ կորածների հարազատները ակցիաներ են անում և այն ունի շարունակական բնույթ, ապա այս ամենը վկայում է որ ա) այդ հարցով գործադիրում զբաղվող չկա, զբաղվելիս էլ բացակայում է արդյունավետությունը, և բ) հարազատներն ունեն կարիք այդ հարցի հանրայնացման և բարձրաձայնման։

Այդ իսկ պատճառով **«Հայկական ալիքը»** համարում է այս թեմայով մինչ այժմ կուտակված տեղեկատվությունը համակարգելը և հանրության իրազեկվածության մակարդակը բարձրացնելը նշված խնդրի լուծման տեղեկատվական բաղադրիչը։ ■

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

[1] Заявление Президента Азербайджанской Республики, Премьер-министра Республики Армения и Президента Российской Федерации, http://kremlin.ru/acts/news/page/64 (հղվել է 08.08.2022 թ.).
[2] Ադրբեջանում գտնվող հայ գերիների իրական թիվը 119–ն է. Սիրանուշ Սահակյան, https://armeniasputnik.am/20220526/adrbejanum-gtnvvogh-haj-gerineri-irakan-tivy-119n-e-siranush-sahakjan-42488654.html (հղվել է 08.08.2022 թ.):
[3] Nagorno-Karabakh conflict aftermath: Winter deepens agony of families of missing people, https://www.icrc.org/en/document/nagorno-karabakh-conflict-aftermath-winter-deepens-agony-families-missing-people (հղվել է 29.08.2022 թ.).
[4] 3809 զոհ, 220 անհետ կորած. Քննչական կոմիտեն 44-օրյա պատերազմի զոհերի և անհետ կորածների թիվ է հրապարակել, https://armenpress.am/arm/news/1073410/ (հղվել է 29.08.2022 թ.):
[5] Մինչ այս պահը հաստատված 39 գերի ունենք. Նիկոլ Փաշինյան, https://www.youtube.com/watch?v=NOVZ1lHzv7o&t=2m19s (հղվել է 08.08.2022 թ):
[6] ԱԺ Արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի արտահերթ նիստը. ՈՒՂԻՂ, https://www.youtube.com/watch?v=Om5DdYC_1q0&t=9m4s (հղվել է 08.08.2022 թ):
[7] INTERIM REPORT ON MALICIOUS PROSECUTION BY AZERBAIJAN OF CAPTURED ARMENIAN SERVICEMEN AND CIVILIANS, https://www.artsakhombuds.am/hy/document/879 (հղվել է 08.08.2022 թ.).
[8] Azerbaijan: torture, impunity and corruption highlighted in new anti-torture committee publications, https://www.coe.int/en/web/cpt/-/azerbaijan-torture-impunity-and-corruption-highlighted-in-new-anti-torture-committee-publications (հղվել է 08.08.2022 թ.).
[9] AD HOC PUBLIC REPORT RESPONSIBILITY OF AZERBAIJAN FOR TORTURE AND INHUMAN TREATMENT OF ARMENIAN CAPTIVES: EVIDENCE-BASED ANALYSIS (THE 2020 NAGORNO KARABAKH WAR), https://www.ombuds.am/images/files/5c7485fdc225adfd8a35d583830dcd17.pdf (հղվել է 08.08.2022 թ.).
[10] INTERIM REPORT ON MALICIOUS PROSECUTION BY AZERBAIJAN OF CAPTURED ARMENIAN SERVICEMEN AND CIVILIANS, https://www.artsakhombuds.am/hy/document/879 (հղվել է 08.08.2022 թ.).
[11] Ե՞րբ է Կարմիր խաչը վերջին անգամ այցելել Ադրբեջանում պահվող հայ գերիներին, https://armeniasputnik.am/20220810/erb-e-karmir-khachy-verjin-angam-ajcelel-adrbejanum-pahvvogh-haj-gerinerin-46512002.html (հղվել է 29.08.2022 թ.):
[12] Пресс-конференция С.Лаврова и Д.Байрамова, Баку, 11 мая 2021 года, https://www.youtube.com/watch?v=_DyhGlmdP7Q&t=18m22s (հղվել է 08.08.2022 թ.).
[13] AD HOC PUBLIC REPORT RESPONSIBILITY OF AZERBAIJAN FOR TORTURE AND INHUMAN TREATMENT OF ARMENIAN CAPTIVES: EVIDENCE-BASED ANALYSIS (THE 2020 NAGORNO KARABAKH WAR), https://www.ombuds.am/images/files/5c7485fdc225adfd8a35d583830dcd17.pdf (հղվել է 29.08.2022 թ.).
[14] Գերիները մեզ կներեն մի ամիս, երկու ամիս ավել գերության մեջ մնալու համար. Փաշինյան, https://www.youtube.com/watch?v=IuylJwfVzfA (հղվել է 08.08.2022 թ.):

[15] Եվրամիություն-Ադրբեջան մեդրամիսը, https://hayaliq.com/euazerbaijan/ (հղվել է 08.08.2022 թ.):
[16] Մինչ այս պահը հաստատված 39 գերի ունենք. Նիկոլ Փաշինյան, https://www.youtube.com/watch?v=NOVZ1lHzv7o&t=3m50s (հղվել է 08.08.2022 թ.):

**armenianproject.com**

**hayaliq.com**